ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի 2025 թվականի տարեկան ֆինանսատնտեսական գործունեության ամփոփ նկարագիր

ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի կողմից տարածքային պետական կառավարման ապահովում միջոցառմանը 2025 թվականի տարեկան արդյունքներով հատկացվել է 550 մլն. 348,0 հազար դրամ, դրամարկղային ծախսը 549 մլն.913,9 հազար դրամ՝ կազմելով ծրագրի 99.9%-ը։

Նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ ապարատի պահպանման հատկացումները նվազել են 26,8%-ով, որը հիմնականում պայմանավորված է 2025 թվականին 2024 թվականի համեմատ աշխատակազմի թվաքանակի, ինչպես նաև այլ նպաստներ բյուջեից հոդվածի կրճատմամբ։

Կրթության բնագավառում՝ 2025 թվականի տարեկան արդյունքներով թվով 5 ծրագրերի 19 միջոցառումներով հատկացվել է 12 մլրդ. 765 մլն. 701,5 հազար դրամ, դրամարկղային ծախսը՝ 12 մլրդ. 597 մլն. 847,5 հազար դրամ՝ կազմելով ծրագրի 98.7%-ը։

Նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ կրթության բնագավառի հատկացումների աճը կազմել է 5,7%։

Մշակույթի բնագավառում՝ 2025 թվականի տարեկան արդյունքներով թվով 3 ծրագրերի 3 միջոցառումներով հատկացվել է 297 մլն. 359,4 հազար դրամ, դրամարկղային ծախսը՝ 263 մլն. 741,7 հազար դրամ՝ կազմելով ծրագրի 88.7%-ը։

Նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ մշակույթի բնագավառի հատկացումների փոփոխություն չի կատարվել։

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից համակարգվող ծրագրերի շրջանակներում 2025 թվականի տարեկան արդյունքներով թվով 3 ծրագրերի 4 միջոցառումներով հատկացվել է 2 մլրդ. 874 մլն. 729,5 հազար դրամ, դրամարկղային ծախսը՝ 2 մլրդ. 807 մլն. 373.3 հազար դրամ՝ կազմելով 97.7%։ Այդ թվում՝ «Տարածքային զարգացում» ծրագրի «ՀՀ մարզերին սուբվենցիաների տրամադրում՝ ենթակառուցվածքների զարգացման նպատակով» միջոցառմամբ նախատեսվել է 2 մլրդ. 390 մլն. 853.2 հազ. դրամ, ֆինանսավորվել է 2 մլրդ. 390 մլն. 845,2 հազ. դրամ՝ կազմելով ծրագրի 100%-ը։

«Մարզերում առաջնահերթ լուծում պահանջող հիմնախնդիրների լուծում» միջոցառմամբ մարզպետի աշխատակազմին հատկացվել է 78 մլն. 596.3 հազար դրամ, նույնքան էլ կազմել է դրամարկղային ծախսը, կատարողականը՝ 100%։

ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից համակարգվող ծրագրերի շրջանակներում 2025 թվականի տարեկան արդյունքներով թվով 3 ծրագրերի 3 միջոցառումներով հատկացվել է 335 մլն.669,5 հազար դրամ, դրամարկղային ծախսը՝ 333 մլն. 719.3 հազար դրամ՝ կազմելով 99.4%։

Այսպիսով՝ ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմին 2025 թվականի տարեկան արդյունքներով հատկացումները կազմել են 16 մլրդ. 823 մլն. 807,9 հազ. դրամ, փաստացի կատարողականը՝ 16 մլրդ. 552 մլն. 595,7 հազ. դրամ՝ 98,4%։

2024 թվականի նույն ժամանակաշրջանի հատկացումները կազմել են 17 մլրդ. 939 մլն. 436,4 հազ. դրամ, փաստացի կատարողականը՝ 17մլրդ. 378 մլն. 379,1 հազ. դրամ՝ 96,9 %։

Հատկացումների գծով նվազումը կազմել է 6.63%, փաստացի կատարողականի գծով՝ 4,99 %:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ 2025-2024ԹԹ. ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ Շիրակի մարզի համայնքների 2025 թվականի տարեկան բյուջեների սեփական եկամուտների պլանը կազմել է 5 մլրդ. 517 մլն. 724.1 հազ. դրամ՝ 2024 թվականի տարեկան սեփական եկամուտների պլանը կազմել է 4 մլրդ. 635 մլն. 814.2 հազ. դրամ, որը ավել է 881 մլն. 909.9 հազ. դրամով, կամ սեփական եկամուտների աճը կազմել է 19.0 %:

Մարզի համայնքների բյուջեների 2025 թվականի տարեկան սեփական եկամուտները կատարվել են 102.1%-ով, նախատեսված 5 մլրդ. 517 մլն. 724.1 հազ. դրամի դիմաց, փաստացի հավաքագրումը կազմել է 5 մլրդ. 632 մլն. 902.7 հազ. դրամ, կամ փաստացի հավաքագրման աճը 2024 թվականի նույն ժամանակահատվածի նկատմամբ կազմել է 1 մլրդ. 092 մլն. 614.4 հազ. դրամ, կամ փաստացի կատարման աճի տոկոսը կազմել է - 24.1 %:

ՀՀ Շիրակի մարզի համայնքների սեփական եկամուտներում 2024 թվականի նկատմամբ 2025 թվականին անշարժ գույքի հարկի աճը կազմել է 235 մլն. 056.6 հազ. դրամ, որից՝ 124 մլն. 275.3 հազ. դրամի աճը պայմանավորված է անշարժ գույքի հարկի դրույքաչափի ավելացմամբ, 110 մլն. 781.3 հազ. դրամի աճը պայմանավորված է վարչարարությամբ և տարվող աշխատանքի որակով:

ՀՀ պետական բյուջեից «Ֆինանսական համահարթեցման» սկզբունքով համայնքների բյուջեներին տրամադրվող դոտացիան հաշվետու 2025 թվականին նախատեսվել է 10 մլրդ. 696 մլն. 112.3 հազ. դրամ, իսկ 2024 թվականին նախատեսվել էր 9 մլրդ. 352 մլն. 061.3 հազ. դրամ, որը նախորդ տարվա համեմատ ավել է 1 մլրդ. 344 մլն. 051.0 հազ. դրամով, կամ 14.4 %-ով, 2026 թվականին նախատեսվել է հատկացնելու 12 մլրդ. 011 մլն. 748.2 հազ. դրամ, որը 2025 թվականի համեմատ ավել է 1 մլրդ. 315 մլն. 636.0 հազ. դրամով, կամ 12.3 %-ով:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ՝

Լ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

13.02.2026թ.